ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սեպտեմբերի 8-ին, կիրակի.—Տօն Ծնընդեան Սրբուհւոյ կուսին Մարիամու յԱննայէ:

Մայր տաճարում, ս. պատարագի ընթացքում, ձեռամբ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոլատեանի, քահանայական կոչում և ձեռնադրություն ստացան հոգևոր ճեմարանի շրջանավարտ հինգ շնորհալի սարկավագներ՝ Ստեփան սրկ. Կարապետյանը, Մեսրոպ սրկ. Խաչիկյանը, Վահան սրկ. Խաչատրյանը, Մկրտիչ սրկ. Ներսիսյանը և Գուրգեն սրկ. Մարտիրոսյանը:

ԿՈՉՈՒՄ ՆՈՐԸՆԾԱՆԵՐԻ

Սեպտեմբերի 7-ին, շաբաթ օրը, երեկոյան, տեղի ունեցավ «Յերեկոյէ կոչումն քահանայութեան» կարգը՝ խարտավիլակությամբ Տ. Աբել աբեղա Օղլուգյանի, որը վկայեց նորընծաների հոգեկան և մտավոր պատրաստվածության և արժանիքների մասին: Ապա նորընծաները խոստացան «յանձն առնուլ և կատարել զամենայն հրամանս սրբոց առաքելոցն և հայրապետացն և կալ ըստ կանոնաց նոցա», «ամենայն պատրաստութեամբ և առանց ձանձրանալոյ կալ ի պաշտօնն Աստուծոյ» և պահել «զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ, ընդ սուրբ Հայրապետսն ըստ երից սուրբ ժողովոց»:

Կոչման արարողության ավարտին նորընծաները հրապարակորեն արտասանում են Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու «Հաւատոյ խոստովանութիւն»-ը, ըստ Գրիգոր Տաթևացու սահմանած յանձնևի (Մաշտոց, Վաղարշապատ, 1876, էջ 36—37):

ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԾՄԱՆ ԿԱՐԳ

Սեպտեմբերի 8-ին, կիրակի օրը, Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց Տ. Ներսես եպիսկոպոս Պոլատեանը:

Ս. պատարագը շարունակվեց մինչև «Զի ողորմած և մարդասէր ես Աստուած» աղոթքը: Վեհաշուք հնչեց «Այսօր Աստուածութիւնն կուարճանայ» շարականը:

Նորընծաները, Աբել աբեղա Օղլուգյանի առաջնորդությամբ, ծնրադիր, ձախակողմյան աստիճաններով բարձրացան Ավագ խորան և, հավատացյալների խուռներամ բազմությանը դառնալով, բարձրացրեցին իրենց ձեռքերը՝ ի նշան աշխարհից հրաժարման:

Մայր տաճարի խնկաբույր կամարների տակ հանդիսավորությամբ ու հպարտական հնչեց «Աստուածային եւ երկնաւոր շնորհ որ միշտ լնու զպէտս սրբոյ սպասաւորութեան առաքելական եկեղեցւոյ» շարականը: Նույն պահին ժողովուրդը, հոգեպես միաձուլվելով արարողությանը, համոզումով ու գոհունակությամբ վկայեց. «Արժանի են»:

Ապա նորընծաները ծնրադիր շրջվեցին դեպի Ավագ սեղան, և ձեռնադրող սրբազան հայրը, ընթերցելուց հետո ձեռնադրության մեծ աղոթքը, խաչաձև «դնէ զաջն ի վերայ գլխոյն նուիրելոյ»:

Այնուհետև սրբազանը «ձեռամբ բերէ զուրարն զպարանոցսն ի ձախմէ ի յաջ»:

Ս. Գրքից օրվա ընթերցվածքից հետո, միաբերան տալեց «Հաւատամք»-ը: Եվ ս. պատարագը շարունակվեց մինչև «Ողջոյն տուք միմեանց», որից հետո աղոթքով և

Մի պահ ձեռնադրության արարողությունից

սրբությամբ նորընծաները ստանում են քահանայական փիլոն և պատարագի կգեստներ: Հնչում է կգեստավորման «Խորհուրդ խորին» շարականը:

Ձեռնադրության հանդիսավոր արարողությունը հասնում է իր հոգևոր վերացման սրբական բարձունքին:

Օծման խորհրդավոր պահն է: Ձեռնադրիչ սրբազանի դիմաց քահանայական լրիվ կգեստավորման մեջ, ավագության կարգով, կանգնել են նորընծաները: Ձեռնադրող սրբազանը մեկ առ մեկ սրբալույս մեռոնով օծում է նորընծաների ճակատն ու ձեռքերը՝ նրանց վերանվանելով նոր անուններով.

Ստեփան սրկ. Կարապետյանը դարձավ Տ. Պսակ քահանա, Մեսրոպ սրկ. Խաչիկյանը՝ Տ. Մաշտոց քահանա, Վահան սրկ. Խաչատրյանը՝ Տ. Զավեն քահանա, Մկրտիչ սրկ. Ներսիսյանը՝ Տ. Եղրաս քահանա, Գուրգեն սրկ. Մարտիրոսյանը՝ Տ. Պարգև քահանա:

Այնուհետև Տ. Ներսես եպս. Պոկապալյանը նորընծաներին է տալիս «կսկիհն և կմաղկմայն», որպես պատարագ մատուցելու իշխանության նշանակ: Դառնալով ժողովրդին, նորընծաները տալիս են իրենց առաջին օրհնությունը՝ «Խաղաղութիւն ամենեցուն»:

Ապա պատարագիչ սրբազանը բովանդակալից ու խրախուսական շնորհավորական քարոզով դիմում է նորընծաներին՝ նրանց ցանկանալով հավատք, կորով, կարողություն՝ փառավորելու համար իրենց սրբազան կոչումը՝ ի պայծառություն մեր Ս. Եկեղեցու:

«Ողջոյն»-ի պահին պատարագիչ սրբազանը ողջագուրվում է նորընծաներին: Նրան հետևում են բոլոր «քահանայք և սարկաւագք»:

ՎԵՂԱՐԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Նույն օրը, երեկոյան, կատարվում են «օրհնութիւն աբեղայի» և «օրհնութիւն վեղարի» կարգերը:

Աստվածաշնչական համապատասխան ընթերցումներից, շարականներից և աղոթքներից հետո, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոկապալյանը հանում է նորընծաների գլխից սարկավագական ջբրունը (գդակ) և այն փոխարինում՝ կուսակրոն քահանայության խորհրդանիշ վեղարով. «Հանցէ Աստուած կիին մարդն գործովք իւրովք: ...Աստուած կգեցուսցէ քեզ զնոր մարդն՝ որ ըստ Աստուծոյ հաստատեալ է արդարութեամբ և օրհնութեամբ»:

«Պահպանիչ»-ով ավարտվում է վեղարի տվչության սույն կարգը, որից հետո նորընծա Տ. Պսակ, Տ. Մաշտոց, Տ. Զավեն, Տ. Եղրաս, Տ. Պարգև աբեղաները Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի և ձեռնադրող Տ. Ներսես եպս. Պոկապալյանի առաջնորդությամբ ներկայանում են Վեհափառ Հայրապետին:

Վեհարանում Նորին Սրբությունը գոհունակությամբ և սիրով ընդունում է Իր հոգևոր կավակներին, շնորհավորում նրանց և մաղթում, որ լինեն հավատավոր ու հարազատ կավակները Մայր Աթոռի և արժանավոր սպասավորները Հայ Եկեղեցու:

Նորընծա հինգ աբեղաները իրենց կանոնական-ավանդական քառասունքը անցկացրին Մայր Աթոռի վանական և խաղաղ մթնոլորտում:

*
* *

Հոկտեմբերի 5 և 6 օրերին, շաբաթ և կիրակի, ուրախության և հոգևոր մխիթարության օրեր եղան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի համար: Այդ օրերին հոգևոր ճեմարանի նախկին շրջանավարտ բարեշնորհ Գրիգոր սրկ. Զմրուխտյանը ԱՄՆ-ի արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վաչե արքեպ. Հովսեփյանի կողմից ստացավ քահանայական ձեռնադրություն:

Շաբաթ օրը, երեկոյան, Տ. Վաչե արքեպ. Հովսեփյանի ձեռամբ կատարվում է նորընծայի կոչման կարգը՝ խարտավիլակությամբ Տ. Վիգեն վրդ. Այքալյանի:

Կիրակի օրը, հընթացս ս. պատարագի, տեղի ունեցավ ձեռնադրությունը:

Հավուր պատշաճի ոգեշունչ և խրատական քարոզ ասաց ձեռնադրող սրբազանը:

*
* *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը այս ուրախ առիթով ջերմորեն շնորհավորում է նորընծաներին, ցանկանում նրանց հաջողություն՝ իրենց պաշտոնի ու ծառայության մեջ՝ ի պայծառություն Մայր Աթոռի և մեր Եկեղեցու, ի մխիթարություն հավատացյալ ժողովրդի: